ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.03.2015թ.
248-ի 6

Պետական գույքի կառավարման
վարչության պետ
պարոն Արման Սահակյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Սահակյան,

2015 թվականի փետրվարի 13-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է Ձեզ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ ծառայողական ավտոմեքենա ունի Պետական գույքի կառավարման վարչությունը,
2. Խնդրում ենք տրամադրել մեքենաների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր մեքենայի մակնիշը եւ պետ. համարանիշը:

Հարցման պատասխանը մինչ օրս չենք ստացել:

Ուստի ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ ևս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ ծրագրերի համակարգող Լիանա Դոյդոյան